

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

Ե. ՓՈՐՈՍԵԱՆ


ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ Է ԳՐՈՒԹԻՒՆ
ՊԵՏՐ Է ՈՒՂՂԵԼ ԱՄ

Խմբագր. ԱՐՇԱԼՈՅՍ ԲՐԱԳՐԻ
ԳԱՅԻՐԷ (Հասցեագրիչ)

Rédaction du journal arménien

ARCHALOUICE

HABBANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԻՊՏՈՍԻ ՇԱՐԱԹ	
Տարեկան, ողջ դասկն.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՆԵՐ	
Տարեկան Ֆրանկ	20
Վեցամսեայ »	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆԽԿ Է
ԵՒ ԹՂՔԱՏԱՐԻ ՊԱՌԷ
ԽՄԲԱԳՐՈՒՔԵԱՆԱ ՎՐԱՅ:

Խմբագրութեան ուղղուած
գրութիւնք եւ չեն թուիր:

ԱՄԵՐԻԿԱ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Մեկնելով Միացեալ-Նահանգներու նախագահ Մաք-Քլինթոնի ըրած յայտարարութիւնը իր վերջին պատգամագրին մէջ, գաղթական հայերու քաղաքացիական իրաւունքներու շնորհման մասին թուրք կառավարութեան ընդդիմութեան առթիւ, Տէյլի Բրոնիլի, արմատական մեծ թերթը կրտս. «Վաշինկթընի դահլիճը վերջնականապէս որոշած է կարգադրել այս խնդիրը, որ երկար ժամանակէ ի վեր առկա մնացած էր երկու կառավարութեան միջև, և այդ մասին հարկաւոր արածութիւնը խնդրած է խորհրդարանէն: Կ'սպասուի որ Միացեալ-Նահանգաց Երեսփոխանական ժողովը կարեն որոշում մը քուէարկէ Ամերիկեան շահերուն պաշտպանութեան համար: Եւ, Միացեալ-Նահանգաց նաւատորմի շնորհակալութիւնը, գործերը հրահանգով, ոչ միայն պիտի օգնէ շուտափոխ կերպով լուծելու այս խնդիրը, այլ, ինչ որ կարեւորն է, (*) «Մեծ Արիւնարբու» ինչ հայ հպատակներուն համար կեանքի երջանկագոյն վիճակ մը ստեղծելու . . . »

Անօգուտ չէ թերեւ, փորձել Ամերիկեան այդ փութիտութեան շարժառիթը քննելու:

Արդէն, հայկական հարցը յորմէ հետէ սկսած է գրեթէ բոլորովին կախում ունենալ արտաքին յարաբերութիւններէն, որոնք միջազգային թատերաբեմին վրայ կը թաւային — շնորհիւ բացակայութեանն այն ներքին շարժիչ ուժերուն բաւականութեան, որ անհրաժեշտ պայմանն է Ազատագրութեան գործին, և, միւս կողմէն, յորմէ հետէ կատարելապէս ապացուցուած է Արեւելեան հարցին առթիւ Եւրոպական ներդաշնակութեան մը իրականացման անկարելիութիւնը, — շնորհիւ փոխադարձ կասկածանքի և անվստահութեան արտադրած պետական հոգիներու հիւանդագին վիճակին, անբնական չէ որ գարշելի բռնակալութեան մը տակ հեծող ժողովուրդ մը,

(*) Կրան Անեկտոր որ ֆրանսերէն երկու կերպով կը գրուի եւ տարբեր նշանակութիւններ ունի. grand Seigneur կը նշանակէ՝ Մեծ Տէր եւ կը գործածուի ընդհանրապէս Օսմանեան Սուլթաններուն համար. միւս ուղղագրութիւնն է grand Saigneur որ կը նշանակէ՝ Մեծ Արիւնարբու, եւ պէտք է գործածել, աւելորդ է ըսել, Համիտին, իբր մակդիր. Գիւտը կը պարտինք Իւրպէն Կոնիէի՝ «Օրոր»ի սրամիտ հրապարակագիրներէն մին:

վայրագութեանց տեսարաններէն խոնջեալ և յուսոյ նշոյններէն զրկեալ իր աչքերը դարձնէ այս անգամ գէպ ի անմահ Վաշինկթընի հիմնած հայրենիքը, ուր Արքահամ Լինքըն — այդ նախկին փայտահարը — գերեաց արատութեան պատերազմով, ազնիւ աւանդութեամբ մը կ'օժտէր երկրին պատմութիւնը:

Ինչ որ եղականապէս կը նուազեցնէ ցնորական հանգամանքն Ամերիկայի կողմէն իրական միջամտութեան մը Արեւելեան գործերուն մէջ և մասնաւորապէս հայկական հայրենի առթիւ, այդ ժողովրդին ազատութեան անսահման սէրը կամ մահմտական բարբարոսներու գէմ աւելի կամ նուազ ճշմարիտ քրիստոնեաներու խորին հակակրութիւնը չէ միայն:

Շարժառիթներուն ամենէն հզորը — նիւթական շահը — որուն զգացումը այնքան սուր է մասնաւորապէս Եանքիներու քով, այս պատահականութեան նկատմամբ գրեթէ բոլորովին հաշտ է զգացման հետ:

Թէպէտեւ երկրին կառավարութիւնը հանրային կարծիքին զգացումներէն կամ հայեացքներէն է որ կը ներշնչուի — գըլխաւորաբար ծանր տագնապներու միջոցին — իր ամենէն կարեւոր որոշումներուն կամ արարքներուն մէջ, մասնաւորապէս երբ կառավարութեան զեկը Ռամկապետականներու ձեռքն է և Պրայան մըն է իրենց պետրասկայն, միւս կողմէն, ստոյգ է թէ գրամատէր գասակարգին շահերն կամ փափաքներն են որ հիմնովին գիծերը կը հայթայթեն հանրապետական կառավարութեան քաղաքական ծրագիրներուն, — մասնաւորապէս Մաք-Քլինթոնի մըն է, ինչպէս ներկային մէջ Սպիտակ Տան հիւրը:

Այս իրողութեան պէտք է կցել, անշուշտ, Միացեալ-Նահանգներու՝ աշխարհակալութեան փորձիչ ճամբուն մէջ մուտքին երեւոյթը, որ, չը գաղթելով հանդերձ զգալապէս հակասելէ հանրապետական Սահմանագրութեան գերազանցապէս ազատական ոգւոյն հետ, և ղինւորականութեան յաւատ պտգալի ուրուականը կենդանացնելէ, ընութիւնն ունի նշանակելի փոփոխութիւն մը ստեղծելու Ամերիկայի արտաքին քաղաքականութեան մէջ մասնաւորապէս, գաղթային ծաւալմամբ, և այս պատճառաւ իսկ աշխարհի քաղաքականութեան մէջ ընդհանրապէս, միջազգային գըլխաւոր հարցերու լուծման սաստրները նոր ու հզոր տարրով մը ճոխացնելով:

Վճռուած է: Միացեալ-Նահանգները

ազգային պարտականութիւն մը նկատած ըլլալ կը թուին, մասնակցելու համար Աշխարհին բաժանման անխուսափելի հետեւանք այն ճակատագրական օրէնքին որուն համեմատ քաղաքակրթութեան (գիտական զօրութիւն) անպարտելի հոսանքին առջև պարտի անհրաժեշտօրէն տեղի տալ վայրենի ու բարբարոս ազիտութիւնը, և որուն կանխապէս յատկացեալ գըլխաւոր զոհերն են ապահովապէս՝ Չինաստան և Թուրքիա:

Բուպայի ապստամբութիւնը, որ այնքան կորովով ու յամաճութեամբ մղուեցաւ գիւցազնական կարսիաներու և Մաք-սիմ Կոմէզներու ճարտար առաջնորդութեամբ, ընդգէմ Սպանիական զառամեալ բռնակալութեան, առիթն ընծայեց առաջին քայլն առնելու նոր ուղղութեամբ: Միացեալ-Նահանգներն որոնք Բուպայիներու ազատագրութեան նպատակով ձեռնարկած պատերազմէն դուրս ելան փառաւորապէս յաղթական և տէր կանոնաւոր բանակի մը, անտարբեր չեն Չինական կայսրութեան ճակատագրին: Եւ անդով յառաջ կը տանին փիլիպպին կղզիներուն մէջ ղինւորական գործողութիւնները, և թէ՛ կը յամառին գոհացում չը տալ Ալիւնալտոյի պահանջումներուն, ոչ թէ՛ որովհետեւ սկըսուած գործ մը կիսաւարտ վիճակի մէջ թողուլ Եանքիներու նկարագրէն դուրս է և կամ շատ վայելուչ չէ Մեծ Պետութեան մը արժանապատուութեան, այլ պատճառը այն է որ այդ կղզեխումբին գրաւումը անհրաժեշտ է իբր կայան մը — թէ՛ ղինւորական և թէ՛ ղիւանագիտական — ուրկէ Ամերիկա պարտի մօտէն հսկել Չինական գործերու ընթացքին զայն գնելու համար, որչափ հնար է, ազգային շահերուն համապատասխան ուղղութեան մը մէջ. և, ապագային որ թերեւ հեռու չէ, թոյլ չը տալ որ Ռուսիա առիւծի բաժինը իւրացնէ մեծ հաշուեյարգարութեան օրը, որ կրնայ բացուիլ Միպետական երկաթուղիներու Բէքինի միացմամբ:

Արդ, Թուրքիա ևս — և այս է ինչ որ պարտի մեզ շահագրգռել — համանման կացութեան մը մէջ կը գտնուի: Նոյն հիւանդութեանց՝ նոյն դարմանները: Արդէն Եւրոպայի տաճած թաքուն նպատակները այս երկրին նկատմամբ տարակոյտի առարկայ չեն կրնար ըլլալ: Վերջին տարիներու անաւոր գէպքերը այդ կացութեան վախճանը փութացնելու քիչ նպաստելէ հեռու են: Եւ սղեակալը չը կրնար, ըստ պատ-

մական օրէնքին, անհունապէս երկարա- տեւել:

Առանց ենթադրութեանց մէջ ընկղմե- լու, թոյլատրելի է ուրեմն հարցնել թէ՛ Ամերիկա, հաւատարիմ գտնուելու համար որպէս պէտք է, իր նոր ընդգրկած քաղա- քական դաւանանքին, մտադի՞ր է արդեօք ձեռք առնել միջոցներ — ունէ պատրուակաւ, ինչպէս ներկայ պարագային մէջ, քաղա- քացիական իրաւունքի հարցը, զորօրինակ — ստեղծելու համար այն պայմանները որոնք անհրաժեշտ են, որպէսզի յարմարագոյն դիրքի մը կարելիութիւնը իրեն համար ապահովէ Արևելեան հարցին վճռական կարգադրութեան ժամանակ:

Տեղի կայ մաղթելու ասիկա Ոյուզիե- տեւ Միացեալ Նահանգներու շահերը թե- րեւս ամենէն նուազ հակառակ են — եթէ ոչ ընաւ — մեր ազգային գոյութեան կրնն- ռոտ ու կենսական խնդրին հետ:

Ա. ձ.

Մառի, որ երբեմն Կ. Պոլսոյ գրական հրատարակին մէջ ծանօթ էր իր «Կալիփ- սոյ» ծածկանունովը, հետեւեալ յօդուածով մեր ազգին մէջ ամենէն շատ զրկանաց են- թակայ ուսուցիչներուն և դերասաններուն վիճակը կը պատկերացնէ յստակ գոյներով և պաշտպան կը հանդիսանայ անոնց:

Կը ցաւինք միայն որ մեր թեր- թին նեղ սրնակները թոյլ չ'տուին մեզ, իր ամբողջութեամբ մէկ անգամէն հրա- տարակել այս խիստ շահեկան յօդուածը:

Շնորհակալութիւն մեր ազնիւ աշխա- տակցին, որ այսպիսի կարևոր հարցեր իր ուշադրութեան առարկայն ըրած է:

ՀԻՆ ԴԵՄՔԵՐ

ՖԱՍՈՒԼԵԱԾԵԱՆ

Ոչինչ աւելի թխուր, աւելի՛ յուզիչ տպաւո- բութիւն կը թողու մեր սրտին ու մաքին վրայ, օրքան երբ աննշան, ցօւրտ, անշուկ ներկայի մը ետին, շատ հեռուն թագնուած, կը նշմարենք հրավառ փառաւոր անցեալի մը աւերակները: Ըլլայ այդ՝ ժողովուրդի մը, ազգի մը, հայրենիքի մը՝ նոյն իսկ աննատի մը անցեալը . . . :

Մէկ երկու շաբաթ առաջ տեսայ Յասուլեա- ճեանը. եւ տեսայ թատրոնի եւ Հայ արուեստ- տագէտներու երբեմնի փայլուն անցեալը, այնքան կենդանի, այնքան վառ գոյներով պատկերացաւ աչքերուս առջև, որ ռիւրտս զողաց կուրծքիս տակ հին յիշատակներու յուզող օարսուճներով . . . :

Յասուլեաճեանը միշտ գեղեցիկ իր երկար մազերով, միշտ վսեմ իր բարձր հասակով, աւելի քան երբէք եռանդուն սիրահար արուեստին, չը ներկայացնէր մեզ արդեօք իր հիւժուած մաշուած անձին վրայ, մեր ալ արդի կէս մը քայքայուած, կմախք դարձած թատրոնը: անցեալի յիշատակ- ներով սակայն միշտ գեղեցիկ, միշտ հրապուրիչ, անցեալ յաղթանակներու դափնիներով զարդա- բուն, ժգտուն թատրոնը, որ մի առ մի զինքը պաշտող արուեստագէտներէն որբանալով, եւ իր հարազատ զաւակներէն ինքզինքը լքուած զգա- լով հանդերձ չ'ուսահատուիր, եւ շարունակ զէպ ի ոգեւորութիւն, զէպ ի փառք, զէպ ի յաղթա- նակ ձգտելու տենջանք՝ մը ունի . . . :

Հայ թատրոնի հիմնադիրներէն եւ Հայ անդ- բանիկ արուեստագէտներէն մեզի կը մնան այսօր Պէյնեան, Մնակեան, Յասուլեաճեան վերջին կայ- ծերը՝ որ կը հրդեհեն, կը վառեն երբեմն Հայ բեմը . . . :

Եւ ի՞նչ բան աւելի մեզ կ'ոգեւորէ ու կը բռնկցնէ, կը վերացնէ մեր մտքերը իրական այս տեղի աշխարհէն զէպ ի աննիթական, գեղեցիկ իտեական աշխարհ մը . . . Ի՞նչ բան աւելի մատ- չելի կ'ընէ մեր հոգիները ազնուապոյն զգացում-

ներու, վսեմ զոհարարութիւններու, քան թատ- րոնը . . . Բեմը՝ ուր կը յուզուին, կը քրքրուին արձակ համարձակ ամեն զգացումներ, ուր մեր- կապարանոց դուրս կուգան վսեմ ու Յածը, Բա- րին ու Չարը, Տգեղն ու Գեղեցիկը. ուր ետ ու ետ կուգան կիրքերու ամենէն ուժովերը եւ ան- զուսպները: Մէրը, Ատելութիւնը, Նախանձը, Բար- կութիւնը . . . :

Եւ որքան աւելի մեծ է նա, Գերասանը, որ դիտէ այնքան ընական, այնքան իսկական, այն- քան կենդանի ներկայացնել իր հերոսը. իւրա- ցընել խորունկ զգացումով եւ արուեստի նրբու- թեամբ անոր կիրքերը, զգացումները, մտածում- ները . . . : Արդարեւ որքան կ'զգայ նա . . . հա- մակ զգացում կը դառնայ բնութիւնը վրայ . . . աւա՛ղ . . . այդ բուն եւ սպառող զգայնութիւնն էր արդէն որ խնդրեցուց Մ. Սասնակը, հարկեցուց հաս- ցուց Գարագաշանները, Թոսպադեանը, Արամ- եանը եւ գուցէ Դրեանցն ալ . . . :

Երկու մեծ պաշտօններ կան, զորս եթէ դա- տենք իրենց տուած արդիւնքէն, պիտի տեսնենք որ բոլորովին յար եւ նման են իրարու, թէպէտ արտաքուստ կը տարբերին ե՛ւ ձեւով ե՛ւ ուղ- ղութեամբ: Այն է՝ Ուսուցչին պաշտօնը եւ Գե- րասանին պաշտօնը . . . :

Որքան վսեմ է խղճամիտ ուսուցչին գործը, նոյնքան եւ վսեմ է խղճամիտ գերասանինը. վստայի երկուքն ալ միեւնոյն նպատակին կը ձգտին. այն է՝ մարդութեան բարոյական կեանքի ստեղծա- զործութեան Բարձր նպատակին: Ասկէ կրնանք հետեւցնել ուրեմն թէ՛ որքան լայն, ընդարձակ, պիտի բռնէ նոյն իսկ անհուն է իրենց ընտրած գործի ասպարէզը, նոյնքան ալ ծանր անհուն է իրենց ինկած պատասխանատուութեան բաժինը:

Մտածել թէ՛ հոգևո՛յ ծնողներ են իրենք . . . ուսուցչի՛ մանկան, իսկ գերասանը՝ ժողովուրդին. այն մեծ տղային՝ որ շատ բաներու մէջ աւելի միամիտ է քան տասնամեայ մանուկը:

Եթէ մենք երախտապարտ ենք մեր ծնողաց, մեզի ֆիզիքական կեանք տուած ըլլալուն հա- մար, քանիպատի՛կ աւելի երախտապարտ պէտք է ըլլանք ուսուցչին եւ գերասանին, որ մեզ կու- տան սրտի՛, մաքի՛ կեանք, բանտկանութիւն՝, մաշեցնելով անտարուճ իրենց երիտասարդու- թեան առայդ ու գեղեցիկ տարիները, եւ շատ ան- զամ ժամանակէն առաջ իրենց թանկագին կեանքն ալ վրայ տալով . . . :

Սակայն վա՛յ անոնց, որ այդ մեծ պաշտօնին գիտակցութեան անտեղեկ, իրենց յանձնուած հոգիները կը փճացնեն, կ'ոչնչացնեն, անհոգ եւ անփոյթ զէպ ի Սուրբ Գործը . . . : Որոնք դասա- բաններու մէջ կ'երեւան՝ սոսկ ամսաթոշակ մը ստանալու համար. կամ բեմերու վրայ՝ նիւթական շահու, ճոխ եւ հարուստ պարելու նպատակով միայն . . . : Հօրեկամներն են ատոնք, ոճիք մը՝ որ անուն չ'ունի, որ քառութիւն, թողութիւն չ'ունի . . . : Իրական ոճրագործները անունք են, որ սպաննելով հոգին ու միտքը, բանա- կանութիւնը, կը թողուն միայն անանական, հրէ- շային բնազդներու ենթակայ մարմինը, որ շատ անգամ ահաւոր պատուհաս մը կը դառնայ մարդ- կութեան գլխին . . . :

Բայց խնդիր է թէ՛ մենք ալ մեր կողմէն կա- տարելապէս ըմբռնած ենք արդեօք մեր ուսու- ցիչներուն ու գերասաններուն կողման բարձրու- թիւնը . . . : Գիտե՞նք, կամ գիտո՞ցր ենք երբէք գնահատել պէտք եղածին պէս անոնց արժանիքը: Եթէ հրապարակաւ կը գրենք, կը խօսինք ու կը դռանք անոնց դէմ՝ որոնք պարտքերն են չեն ճանչցեր, եթէ անաչառ ենք զանոնք քննելու, դատելու եւ դատապարտելու մէջ, միթէ՛ — արդար ըլլայու համար — նոյնքան ալ անաչառ պէտք չէ՞ ըլլանք եւ այն անհատներու դէմ, որոնք այդ պաշտօններու սրբութեան ու վսեմութեան վայել՝ Պատիւը, Յարգանքն ու Ակնածանքը չգիտեն տալ պաշտօններուն . . . :

Ի՞նչ աչքով կը նային, խնդրեմ, մեզնէ շա- տերը առ հասարակ ուսուցչին ու գերասանին վրայ . . . : Տեսակ մը արհամարհանք չ'կա՞յ ար- դեօք թաղականի մը շարժուածքին, խօսուածքին ու շեշտերուն մէջ՝ երբ ուսուցչին հետ ունէ խըն- դրոյ մը մասին գործ կ'ունենայ . . . : Անպատկառ ըլլալու չափ յառաջ չ'երթար շատ անգամ, իր

անոր հետ ունեցած յարաբերութիւններուն մէջ . . . : Չ'նկատե՞ր զայն իբրև վարձկան մարդ մը՝ որ պէտք է իր եւ իրեններուն քմահաճոյց խաղալիք դառնայ. իրենց աչքերով տեսնէ, իրենց ականջ- ներով լսէ, իրենց դատողութեամբ դատէ . . . : Դպրոցին դուռը ցոյց չ'տրուի՞ր անոր յետին ստուռ- կի մը կամ ծառայի մը պէս, երբ խղճամիտ է եւ կը մտքէ իր խղճին ու համոզման հակառակը խօսիլ ու գործել . . . :

Ինչպէ՞ս ըմբռնած ենք նաեւ գերասանն ալ . . . : Ճանչցե՞ր ենք արդեօք անոր արուեստին բուն հոգին. չէ՞ որ մեր հասկացողութեամբ խեղճ ու կրակ մարդ մըն է նա, որ բեմին վրայ կտոր կտոր կ'ըլլայ, կուլայ, կը խնդայ, ժողովուրդը կը զուարճացնէ, օրապահիկ մը հայթայթելու համար . . . : Ի՞նչ յարգանք արժէ տալ արդարեւ մարդու մը՝ որ կենդանի խաղցող պաճուճապատանք մըն է միայն, ժողովուրդին հաճոյքներուն ու զուար- ճութիւններուն ծառայող բանաւոր մեքենայ մը:

(Շարունակելի)

ՄԱՌԻ

ՄԱՀՄՈՒՏ ՓԱՇԱՅԻ ՓԱՌՈՒՍԸ

«Յիկարօ» ի Մարտէյլի թղթակիցը, դեկտ. 22 թուականաւ հետեւեալը կը հե- ռագրէ:

Սուլթան Համիտի քեռայրը, իր հետն ունենալով երկու զաւակները, թուրք և գաղղիացի գրագիրները և երեք ծառաները, Նօայլ պանդոկը իջած է:

Բազմաթիւ համակրական հեռագիրներ ստացած է: Մարտէյլ բնակող թուրք և հայ գաղթականները փախաք յայտնած են իրենց յարգանքը մատուցանելու:

Թուրքիոյ ընդհանուր հիւպատոսը Սէյ- ֆէտտին Պէյ, երեկ երեկոյ երկայն հեռա- գիր մը քաշած է ի Կ. Պոլիս, պատմելով անշուշտ շոգեհնաւին մէջ իւր տեսակցութեան արդիւնքը:

Մահմուտ փաշա մերժած է առանձինն ընդունիլ հիւպատոսը և ստիպած է զայն խօսիլ ի ներկայութեան իր երկու զաւակաց, Սապահէտտինի և Սուլթանուլլահի: Եւ անոր այցելութեան նպատակը գիտնալուն պէս, վճնտած է զայն:

Մահմուտ փաշա բուն լեզու մը գոր- ծածած է Սուլթանին դէմ, ըսելով որ Պոլիս պիտի վճարուէր այն պահուն միայն, երբ հոն հաստատուի իմաստուն և բարեկարգ կառավարութիւն մը:

Ընդհ. Հիւպատոսը կուզէր ծանրանալ ի մասնաւորի սա կէտին վրայ թէ, Սուլ- թանին մեծ քրոջ ամուսնոյն փախուստը գայթակղութիւն պիտի պատճառէ ի թուր- քիս. բայց Մահմուտ փաշա անդրդուելի մնացած և տեսակցութիւնը աւարտած է հիւպատոսին վճնտուելովը:

Մահմուտ փաշա դուռը ցուցնելով գո- չած է, «կորսուէ՛, կորսուէ՛ ասկէ և քու տեղեկագրիդ մէջ մի՛ մոռնար ըսելու թէ քեզի դուռնէն դուրս ձգած եմ»:

Շոգեհնաւին պաշտօնեաները ըսին ինձ, կը յարէ «Յիկարօ»ի թաղթակիցը, թէ Մահմուտ փաշա շատ դժուարութեամբ փա- խած է Պոլիսէն. որովհետև թուրք փոլիսը ամենուրեք կը հետապնդէր իրեն, որով ստիպուել է գիշեր մը և ցերեկ մը նա- ւակին մը մէջ անցնել իր երկու զաւակնե- րովը և ժօրժի շեգեհնաւը մտած է, Պոլիսէն ութը մղոն շոգեհնաւը հեռանալէն վերջ:

Յրանս. փոխը հրաման ունի մտնել տարագրեալին վրայ հսկելու: Կը հաւատա տեն թէ Ընդհ. հիւպատոսը այսօր պատուիրակ մը դրկած է Մահմուտ փաշայի քով, առանց ելք մը ունենալու:

Տակաւին չ'գիտցուի թէ, Յրանսական կառավարութիւնը ինչ ընթացք պիտի բըռնէ: Մահմուտ փաշա կ'ամբաստանուի թէ Պաղատտի երկաթուղւոյ Անգղիական ընկերութեան մը տրուելուն մէջ կաշառակերութիւն ըրած է:

Ընդհակառակը Մահմուտ փաշա կը փնտռուի իբրև դաւադրիչ և վերոյիշեալ պարագան, անոր արտաքսումը արդարացունելու համար իբր պատրուակ կը գործածուի:

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Վսեմ. Պողոս փաշա նուպար իւր Ազնուայլ Տիկնոյ հետ անցեալ օր Աղեքսանդրիա մեկնեցաւ, դիմաւորելու համար Առաքել և Ջարեհ պէյ երկու որդիքը, որոնք իրենց մէկ դասատուին ընկերացած Եւրոպայէն արձակուրդով կուգան, մէկ երկու ամիս Գահիրէ իրենց ծնողաց քով մնալու համար:

Կը հաւաստեն թէ, վերջերս ընտրուած չորս Երեսփոխան անդամներէն մին, Մեծ. Տիար Գաւնիկ Յովակիմեան, իր հրատարականը մատուցած է. 'ի մէջ այլոց առարկելով թէ 'ի նպատտ իրեն քուէարկողներու այն փոքրագոյն թիւը (28) ոչ միայն շատ անբաւական է արդի Գահիրէնակ հայութեան թուոյն հետ բազմատելով, այլ ինք անպատուարեր և ազնիւ ըզգացմանց հակառակ կը համարի, երբ հազարէ աւելի քուէարկելու իրաւունք վայելող ազգայնոց բողոքի ձայները ստնակութելով պիտի երթայ բազմիւ աթոռ մը, որ միւս զրկուածներուն ալ արդար սեփականութիւնն է:

Ազգ. Առաջնորդարանի մէջ քանի մը պաշտօնական անձանց կողմէն եղած թախանձաններուն ու պնդումներուն ալ, Տիար Գ. Յովակիմեան բերանացի միևնոյն իրաւացի դիտողութիւններով պատասխանած է:

Պարտաւորութիւն կ'զգանք գովելու Տիար Գ. Յովակիմեանի ժողովրդասէր զգացումներն, որ մէկ կողմէ հայ անհատներու բռնաբարեալ իրաւունքները կը պաշտպա-

նէ իր այս կարուկ ընթացքով, և միւս կողմէ, իր սուած պաշտօնական պատակովը՝ խոչըր դաս մը կուտայ ազգային Առաջնորդարանը և ազգային գործերը իրենց սեփականութիւնը համարողներուն: Կը յուսանք թէ վերջընտիր միւս երեսփոխաններն ալ իրենք այսպէս ուղիղ դատելու ազնուութիւնը պիտի ունենան:

—Թերթիս 39րդ թուով, Առաջնորդարանի 98 տարւոյ հաշուոց քննութեան մասնաժողովոյ անդամներէն Տիար Հ. Կ. Պէրպէրեանի հրատարակած նամակին ի պատասխանի կը լսենք թէ՛ Ազգ. վարչութիւնը հետեւեալ օրն իսկ պաշտօնական նամակաւ մը հրաւիրած է զՏիար Պէրպէրեան, որ փութայ 99 թուականի լրումէն առաջ աւարտել հաշուեքննական գործողութիւններն, վերջին տարւոյ հաշուեփակը ընելու համար:

Առաջնորդարանը միայն թէ քիչ մը ուշացած կերևի այս յայտարարութիւնը ընելու համար. այնչափ ամիսներ երեսի վրայ թողուած հաշիւները, քանի մը օրէն աւարտել և նոր Դարին հասցնել եթէ ոչ անկարելի, գոնէ շատ դժուար է կարծենք... շատ մը պատճառներով:

ԲԱՆԱՍԷՐ Ի Գ. ԳԻՐՔԸ.
Ստացանք Փարիզ հրատարակուող «Բանասէր» հնարասական, պատմական, լեզուաբանական և քննական հանդիսին, առաջին հատորը կազմող Գ. Գիրքը: Ուրախութեամբ կը տեսնենք թէ մեր գիտնական պաշտօնակիցը կարողացեր է այս անգամ տպագրութեամբ դուրս բերել իւր ազգուս հանդէսը:

Այնտեղ կը տեսնենք բացի Պ. Կ. Յ. Բասմաշեանի մի քանի յօդուածներէն, երկու յօդուածներ Հ. Յ. Աճառեանէ, մի մի յօդուած Ասողիկէն և Բրոսէէն և երկու յօդուածներ Ս. Վ. Պարոնեանէ:

Ինչ որ մխիթարական է և վերին աստիճանի ուրախալի, այն է տեսնել թէ ազգիս սիրելի և ընդհանուր Հոգևոր պետ Վեհափառ Հայրիկը, բարեհաճեր է հարիւր ըսելի նուիրել, գնահատելով «Բանասէր»ի ազգօգուտ և գիտական ջանքերն: Ուրախալի է նաև տեսնել թէ ազգին մէջ դեռ գոյութիւն ունեցող ցիր ու ցան հարուստ ալ անտարբեր չեն գտնուիր «Բանասէր»ի նման գիտական-գրական հրատարակութեանց, այսպէս՝ ուրախութեամբ կը կարգանք թէ Պ. Առաքել Մատուրեան նուիրեր է 10 անգլիական ոսկի, բանասէր Պ. Անտրօնիկ Իօնէսքի 40 ֆր., Ամբրիկաբնակ Պ. Մինաս Դաւթեան 1 տոլար:

Փիլիսի կիսամսեայ հանգիսի Պատ. Խմբագրութիւնը հետեւեալին հրատարակութիւնը կը խնդրէ մեզմէ:

Ծանօթ է մեր արդոյ բաժանորդաց որ «Փիլիսի» ը գաղթած է հրատարակուելէ անցեալ նոյեմբերի սկիզբէն, խմբագրութեանս հետ ընտ առնչութիւն չունեցող ու մեր կամքէն անկախ պատճառով մը, այսինքն, Մնտիկեան Տպարանին յանկարծակի փակումովը:

Արդ, պարտք կ'զգանք յայտարարել մեր բոլոր պատուական բաժանորդաց ու հայ հասարակութեան թէ՛ յիշեալ Տպարանին իր բոլոր մեքենաներով ու գոյքերով օրինական արգելքի տակ դրուած է այս օրէն ի վեր, Խմբագրութեանս պահանջումին գահացում տրուելու համար, և թէ ի մտոյ պիտի վերերևի «Փիլիսի» ը, աւելի ճիշտ ու շահեկան պարունակութեամբ, սպասելով մեր, դատին ելքինչոր ստանձնած է պաշտպանել Գաղաքիս հայ փաստաբան Մեծ. Տիար Սմբատ Փափազեան:

Մնամ և ըն.
Տնօրէն Խմբագիր
Ս. ԲԻԻՐԱՏ

Գահիրէ 30 Դեկտ. 99

Աղէքսանդրիա 21 Դեկտ. 99

... Խմբագիր

Քանի մը անգամներ Գրադարանիս նկատմամբ Ձեր թերթին մէջ տեղեկութիւններ տրուած էին, որոնք մասնաւոր անհատներու կողմէն գրուած ըլլալուն, չէին կարող անշուշտ բաւականութիւն տալ «Արշալոյս»ի այն ընթերցողներուն, որոնք հասարակական հիմնարկութիւններու ընթացքին ու գործունէութեան վերաբերմամբ քիչ թէ շատ հետաքրքիր են:

Վարչութիւնս որոշած ըլլալով Յունուար ամսոյ սկիզբները՝ Գրադարան-Ընթերցարանիս քառամսեայ հաշուետուութեան մանրամասն տեղեկագիրը թերթիդ միջոցով հրատարակութեան առաւել, պիտի խնդրէինք Ձեզմէ սու այժմ հետեւեալ հաշուեցոյցը հիւրընկալել «Արշալոյս»ի յառաջիկայ թիւերէն միոյն մէջ:

Շնորհակալութեամբ ստացուած են հետեւեալ միանուագ նուիրատուութիւնները. Պ. Պ. Կ. Գ. Տէրվիշեան՝ 40 դրուշ ողջ, Ունի՝ 5, Օր. Թաթարեան՝ 10, Մ. Նորատունկեան՝ 10, Տիկնի թ. 40, Յ. Մ.՝ 20, Հ. եւ Գ. Սանտեան եղբայրներէ՝ 20. -- Գումար 145 դրուշ ողջ:

Հետեւեալ գոյքերը ստացուած են նոյնպէս. Պ. Պ. Յ. Մութաֆօֆէ՝ 4 հատոր ազգագրական հանդէս:

Պ. Պ. Գ. Մնտիկեանէ՝ պատի ժամացոյց մը:

» Ա. Չերքեզեանէ՝ 2 մարմարեայ սեղան եւ տասը տարուան «Արեւելք»ի հաւաքածոյները: Առիթէն օգուտ քաղելով, կուգանք մեր շնորհակալութիւնն յայտնելու «Արմէնիա»ի, «Լ'Առմէնի»ի, «Համալսարան»ի, «Հնչակ»ի, «Շարժում»ի՝ «Սուրհանդակ»ի եւ «Արշալոյս»ի յարգելի խմբագիրներուն, որոնք բարեհաճեցան մէկ մէկ օրինակ իրենց թերթերէն հիմնարկութեանս ուղարկելու: Երկու ամիսներ առաջ թերթիդ թիւ 20ի մէջ

ԼԱ ՄԻՉՈՒՄԼ ԼԱՅՅ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱԾԽԱՐՅԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ Ի ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները:

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպատտ իրենց գումարած է 3 ՄԻԼԻՈՆ 480 ՄԻԼԻՈՆ որ գրութէ՛ այլաբարձի ուրիշ որ և է ընկերութենէ մէկ միլիար աւելի է:

Ս. ԱՆՆԱՐ Ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

Այլաբարձի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութենէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ:

ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ զլիսաւոր գործ. յ'Աղէքսանդրիա:

հրատարակում ցուցակի հետեւեալ սխալները կը խնդրենք ուղղել հետեւեալ վերաբերումով:

Գրիտոնեայ, փոխանակ 10 զրշի ուղղել 20
Ո՛նն » 30 » » 20
Գլ Զարեքեան » 10 » » 20
Մուրա » 6 » » 5

Ջանեցէք ընդունիլ յարգելի Տնօրէն, մեր յարգանքներն:

Ի դիմաց ժող. Գրադ.-Ընթերցարանի վարչութեան
Փոխ-Ատենադպիր Ատենապետ
Մ. ՎԱՐԴԱՆԵԱՆ 8. Ա. ԳԱԼՅԱՅԵԱՆ

Հետեւեալ քանի մը անգամ, որ ազգային մը զրկած է մեզ՝ կը հրատարակենք, այդ մասին յարմար առթիւ մը պէտք եղածներն ըսելու դիտարկութեամբ:

ՀԱՅ ՎԱՇԵՍՏԱՌԻ ՄԸ

Ինչպէս ժամանակաւ կար ե նոյն իսկ հիմակ ալ կը գտնուին Փոքր-Ասիոյ մէջ հայ սեղանաւորներ, որոնք կարօտ գիւղացիներու քերթն տոկոսով դրամ կուտան, — անկ անուազն մէկ ամսոյ համար 10—20 զրշ. առ հարիւր տոկոս աննելով — այժմ բարեբաղդաբար ունեցած ենք Գահիրէի մէջ ալ մէկը, որ քերթն տոկոսով!!! դրամ կուտայ հայ խեղճ գաղթականաց:

Անոնք որ պէտք ունին թող դիմեն պիտի ըսէի, սակայն շատ տգեղ օրինակ մը, որ քանի մը օր առաջ տեղի ունեցաւ, կարգիլէ ինձ այդ հրաւերն ուղղելու:

Պարոն մը Օ. Ա. անցեալ օրեր դիմած է յիշեալին՝ և 134 դահեկանի փոխառութիւն մը կնքած է. մէկ ամսոյ համար 200 դահեկանի մուրհակ մը ստորագրելով. (66 դահեկան տոկոս . . .): Երկրորդ ամսոյ մէջ ալ նոյնչափ տոկոսի մը պահանջումը կարթնցնէ խեղճ հայ արհեստաւորը իր թմբութենէն և չ'կրնալով պահանջուած տոկոսը դրամով վճարել, կստիպուի քանի մը շառաչուն ապտակներով կարգադրել իր հայրը . . .:

Ո՛վ դարբ, ո՛վ բարբ:

Գ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Ա. Զ. Գ.

Որբասիրաց Ընկերութեան Ընդհանուր Ժողովը տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի 31 դեկտ. 1899, կէս օրէ յետոյ ժամը ճիշտ երկուքին. Արժ. Տէր Եղիշիկ քահանայ Պաշտօնոյ ընակարանին մէջ, ի Պէն-Էլ-Մուրէն Ծրէրներու Գոլէժին դիմաց:

ՕՐԱԿԱՐԳ

1. Համարառութիւն առժամեայ Գործ. Ժողովոյ,
2. Ընթերցումն և վաւերացումն կանոնադրի,
3. Մնայուն ընտրութիւն Մայր Դիւանի և Գործ. Ժողովոյ:

Կը խնդրուի որ ընկերութեան բոլոր անդամները մասնաւոր փութաջանութեամբ հաճին անպատճառ ներկայ գտնուիլ սոյն կարևոր նիստին, յօգուտ և ի պաշտպանութիւն անոք և անմխիթար որբերու:


Ի դիմաց Ընդհ. Ժողովոյ առժ. Դիւանի
Վ. Ատենադպիր, Ատենապետ,
Գ. ՊԱՀԼԱՒԱՆ ՏՐ. ՅԱԿՈՒԲԵԱՆ

Գահիրէ, 27 Դեկտ. 99

Վ. Ա. ՃԱՌԱՏՈՒՆ Թ. ԷՅԻ

Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿ.

ՇԱՐԷ-ԱՊՏԻԻԼ-ԱԶԻԶ



Թէյի գործածութեան ընդհանրանաւորութիւնը, թէյի ճաշակն ևս նրբացած է. որով թէյի առևտուրն վաճառականութենէ աւելի արուեստ մըն է որ միայն երկարատև և ճոխ առևտուրէ յառաջ եկած փորձառութեամբ կ'ստացուի:

Մեր առնն, որ արդէն հանրածանօթ է իր քանամեայ գոյութեամբ և ընդարձակ գործառնութեամբ, այս տարի ևս իր մասնաւոր գործակալաց ձեռամբ գնած է բազմազան և մեծաքանակ ընտիր թէյեր 21-նԱՍՏԱՆԻ, ՃԱՎԱՅԻ, ՄԷՅԻՍՏԻ և ՀՆԴԿԱՍՏԱՆԻ գլխաւոր արտադրիչներէն, որոցմէ արդէն հասած է մեզ. ինչպէս նաև ձեռնուրան եղանակի յարմար թէյեր, որոնք իրենց գերնտիր հոտաւետութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, գներու ՉԱՓԱՉԱՆՑ աժանութեամբ ալ ամեն քսակի դիւրամատչելի են:

Թէ Կ. Պօլսոյ և գաւառաց, և թէ օտար երկիրներու մէջ մեր տան ցոյց տրուած վստահութիւնն կը քաջալերէ մեզ, առաւել ևս յարիւ մեր սկզբունքին, որ է՝

ՌԱԳՎԱՏՈՒՄԻՆ ԹԷՅԻՆՈՒ ՆԵՄԱԿԻ, ԿՕԽԵԻ
և զճոց մասին:

Մեծաքանակ թէ փոքրաքանակ մեղի եղած ԿԱՆԻՒԿ դրամով յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

5 — 50

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱՄԹ 29 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1899

Ա. Թիւ 2723 շահած է Ծրանք 1000
Բ. " 1626 " " 200
Գ. " 1343 " " 400
Դ. " 4987 " " 50
Ե. " 9012 " " 50

Հեռակալք 23 ական Փրանք կը շահին

5074	7833	4097	271	2913	3933
9970	7266	4753	4799	27	9515
5190	4705	5940	9576	4086	5427
	299	6268	3592	5694	

ԵՄԵՆՈՒԹ. — Այն շահող թիւերը որոց վիճակեալ պարգևներն ութը օրէն չեն գանձուիր, Ընկերութեան սնտուկին սեփականութիւնը կը լինին:

Տպագրութիւն Ա. Ա. ԴԱՐԻՆԵԱՆ

ԼԵՒՈՆ ԿԻՄԻԻՇԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

ՅՕՆՕԿԻՐԱԾ

Գ. Ա. ՀԻՐԷ, — Մուսի փողոց, — Գ. Ա. ՀԻՐԷ
Ս. և Ս. Սեմալիի վաճառատան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի և բոնօլի ընտիր տեսակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄԵՅԷ՛Ք ՀՈՆ և պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արմնց և կանանց ժամացոյցներ, աղամանդազարդ, ոսկի, արծաթ և ցիֆի:

Յրանսական և ամերիկեան ապրանց ամենաընտիր տեսակներէն զարդեղէններ, օղբներ, մասանիներ եւ այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԻՈՐ

43 — 50

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Ամենափափուկ սպամոքս ունեցողներուն համար:

Մի՛ ուտէք երբէք այն հացերէն, որոնք զուրկ են փորձառու և վարպետ հացագործի մը միջոցաւ պատրաստուած ըլլալու առաւելութիւններէն:

Երբ մեր ամեն օրուան կերած հացերը լաւ եփուած տեսակէն չեն, դժուարամարսութիւն կը պատճառեն և հետեւաբար շատ մը հիւանդութեանց ենթակա կը լինեն զմեզ:

Այս հիւանդութիւններէն և հետեւաբար բժշկաց յաճախ այցելութիւններէն ազատ մնալու միակ միջոցն է՝ դիմել

ԵԿԱՒՕՅ ԵՒ ԸՆԿ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈՐ

Օռօգի Պափ վաճառատան մօտերը, Կամե-Էլ-Պեմարի ճիւղ դիմացը

ԵԿԱՒՕՅ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փուռին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ և անխարդախ ալիւրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱՒՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ գաղղիական, անգղիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմոցելի ըլլալու պայմանաւ:

ԵԿԱՒՕՅ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի և կաթի պարսիմաթներ և այլն:

ԵԿԱՒՕՅ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնք ամենայն ճշդութեամբ և փութով կը կատարուին:

18 — 50

Le Gérant Dr A. B. HAGOPIAN